ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 10 >> հունիսի 2015 թվականի N 26 ք.Գյումրի

ԲԱՐՍԵՂ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2.2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգի» 3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի զեկուցագիրը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Բարսեղ Քոչարյանին գործուղել քաղաք Երևան, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության Ուսուցման կենտրոն՝ <<Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստում>> դասընթացին մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը 5 աշխատանքային օր՝ 2015 թվականի հունիսի 15-ից 19-ը ներառյալ:
3. Գործուղման ընթացքում աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Բարսեղ Քոչարյանի պարտականությունների կատարումը վերապահել բաժնի գլխավոր մասնագետ Մուշեղ Մուրադյանին:

Ֆ.ՑՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝